Հավելված N 3
ՀՀ փոխվարչապետի
N 516-Լ որոշման

«ԿԱՆԽՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» ՄԵԴԱԼԻ ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալը (ձևը կցվում է) շնորհվում է իրավախախտումների կանխման, կանխարգելման կամ բացահայտման գործում բարձր ցուցանիշներ դրսևորած էկոպարեկային ծառայողներին:

2. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալն իրենից ներկայացնում է 38 մմ տրամագծով ոսկեգույն շրջանակ, որի կենտրոնում պատկերված է էկոպարեկային ծառայության խորհրդանշանը: Մեդալի եզրագծի վերին մասում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», իսկ ներքևում՝ «ԿԱՆԽՈՒՄ, ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ» բառերը:

3. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալն ունի վեցանիստ սեղանաձև կախիչ՝ 30 x 45 մմ չափերով, վրայից ուղղանկյունաձև շերտաձողիկ՝ «ՀԱՅԱՍՏԱՆ» մակագրությամբ: Կախիչը կապույտ է՝ 1 ուղղահայաց 10 մմ լայնությամբ մեջտեղով անցնող ոսկեգույն զոլակով, որի ձախ և աջ եզրագծերից 2 մմ հեռավորությամբ անցնում են կանաչ գույնի 2 մմ լայնությամբ 2 զոլակներ:

4. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի դարձերեսին հայերեն և անգլերեն լեզուներով գրված են «ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «ECOPATROL SERVICE» բառերը: Մեդալը դարձերեսից համարակալված է:

5. «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալը շնորհում է էկոպարեկային ծառայության պետը: «Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի հետ տրվում է վկայական:

Ձև

«Կանխում, Կանխարգելում, Բացահայտում» մեդալի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ